

No. 47014

**Argentina
and
Armenia**

Agreement on agro-industrial cooperation between the Government of the Argentine Republic and the Government of the Republic of Armenia. Buenos Aires, 17 May 2000

Entry into force: *9 January 2002 by notification, in accordance with article 13*

Authentic texts: *Armenian and Spanish*

Registration with the Secretariat of the United Nations: *Argentina, 15 January 2010*

**Argentine
et
Arménie**

Accord de coopération agro-industrielle entre le Gouvernement de la République argentine et le Gouvernement de la République d'Arménie. Buenos Aires, 17 mai 2000

Entrée en vigueur : *9 janvier 2002 par notification, conformément à l'article 13*

Textes authentiques : *arménien et espagnol*

Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies : *Argentine, 15 janvier 2010*

[ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN]

ՀԱՍՏԱՑՆԱԳԻՐ

ԱՐԳԵՆՏԻՆՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՍԻՋԵՎ

ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արգենտինյան Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ «Կողմերը»,

Հատուկ ուշադրություն դարձնելով երկու երկրների տնտեսությունների շարունակական զարգացման համար կարևորություն ունեցող գյուղատնտեսական սննդի բնագավառում համագործակցության ամրապնդմանը,

Հաշվի առնելով միջազգային տնտեսական նոր իրավիճակը, գյուղատնտեսության, սննդի և գյուղատնտեսության զարգացման բնագավառներում համագործակցության զգալի մասնաբաժինը երկու երկրների տնտեսությունների առավել զարգացման համար,

Համաձայնեցին հետևյալի մասին:

Հոդված 1

Կողմերը պայմանավորվում են հաստատել և ամրապնդել համագործակցությունը ագրոարդյունաբերական համալիրի զիտական, տեխնոլոգիական և առևտրատնտեսական բոլոր բնագավառներում:

Հոդված 2

Սույն համաձայնագրի իրականացման համար Կողմերի իրավասու մարմիններն են.

- Արգենտինյան Հանրապետության կողմից՝ Արգենտինյան Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանն առընթեր գյուղատնտեսության, անասնապահության, ձկնորսության և սննդի քարտուղարությունը,
- Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը:

Հոդված 3

Համագործակցությունը կիրականացվի Կողմերի գործող օրենսդրության համապատասխան և կընդգրկի հետևյալ ծրագրերը.

- ա. Տեխնիկական անձնակազմի փոխանակում.
- բ. Տեղեկատվության փոխանակում.
- գ. Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ դասախոսությունների և գիտաժողովների կազմակերպում.
- դ. Տարբեր ճյուղերի վերաբերյալ ցուցահանդեսների կազմակերպում.
- ե. Համագործակցության ցանկացած այլ ձև, որի վերաբերյալ Կողմերը համաձայնության կզան:

Հոդված 4

Սույն համաձայնագրի արդյունավետ կիրառման համար Կողմերը կարող են ստորագրել հատուկ արձանագրություններ և մշակել համագործակցության կոնկրետ ծրագրեր:

Հոդված 5

Կողմերը կնպաստեն հետազոտման և որակավորման մարմինների մասնակցությամբ Հոդված 1-ում նշված ծրագրերի և նախագծերի իրականացման գործում: Նաև, փոխադարձ համաձայնության հիման վրա Կողմերը կարող են հրավիրել երրորդ երկրների կազմակերպություններին և հաստատություններին՝ մասնակցելու Հոդված 3-ով նախատեսված իրենց ընդհանուր համագործակցության ծրագրերին:

Հոդված 6

Կողմերը կնպաստեն գյուղատնտեսական և սննդի արտադրանքի, ինչպես նաև մյուսների և սարքավորումների փոխանակմանը ագրոարդյունաբերական համալիրի համար: Այդ նպատակով Կողմերը կդադարեցնեն իրենց համապատասխան երկրների պետական և մասնավոր հաստատությունների միջև կապերը այլոց թվում այցերի, դասախոսությունների, գիտաժողովների և ցուցահանդեսների իրականացման միջոցով:

Հոդված 7

Կողմերը պայմանավորվում են խթանելու տեխնոլոգիական և ագրոարդյունաբերական համագործակցությունը՝ երկու երկրների ձեռնարկությունների և հաստատությունների մասնակցությամբ:

Հոդված 8

Կողմերը կզարգացնեն գիտատեխնոլոգիական տեղեկատվության և արգենտինացի ու հայ փորձագետների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքների փոխանակումը:

Հոդված 9

Սույն համաձայնագրի իրականացմանն առնչվող հարցերի կարգավորման նպատակով Կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից կստեղծվի Համատեղ Հանձնաժողով, որի նիստերը կգումարվեն երկու տարին մեկ անգամ ըստ հերթականության յուրաքանչյուր պետությունում:

Հոդված 10

Սույն համաձայնագրի շրջանակներում համագործակցության զարգացման հետ կապված ծախսերը կհոգա Կողմերից յուրաքանչյուրը:

Այն Կողմը, որ սեփական նախաձեռնությամբ ներկայացուցիչներ և մասնագետներ կուղարկի մյուս Կողմի տարածք, պարտավոր է հոգալ համապատասխան ծախսերը:

Հոդված 11

Սույն համաձայնագիրը Կողմերի համաձայնությամբ ցանկացած ժամանակ կարող է ենթակա լինել փոփոխությունների:

Հոդված 12

Սույն համաձայնագրի իրականացման հետ կապված հակասությունները կլուծվեն բանակցությունների միջոցով:

Հոդված 13


Սույն համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ծանուցման օրվանից, երբ Կողմերը դիվանագիտական ճանապարհով միմյանց կտեղեկացնեն համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին:

Համաձայնագիրը կունենա հինգ (5) տարի տևողություն և ինքնաբերաբար կերկարաձգվի նույնքան ժամանակով, բացառությամբ, երբ Կողմերից մեկը սույն համաձայնագրի յուրաքանչյուր ժամկետը լրանալուց առնվազն վեց (6) ամիս առաջ դիվանագիտական ճանապարհով կտեղեկացնի մյուս Կողմին դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդի նրա գործողության ընթացքում սկսված ծրագրերի իրականացման վրա:

Ստորագրված է Բուենոս Այրես քաղաքում, 2000 թ. մայիսի 17-ին երկու բնօրինակով, իսպաներեն և հայերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ԱՐԳԵՆՏԻՆԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

